# THE 3RD HEROIC BATTLE OF CHORK-MARZBAN (100TH ANNIVERSARY)

*Posted on October 29, 2020 by Keghart*



**Category:** Opinions

**By Minas Kojayan PhD**, Los Angeles, 28 October 2020

*Click on* ***ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ*** *for the Armenian text.*

The history of the Armenian people is distinguished by many heroic battles. Our enemies have often compelled us to oppose them with the force of arms. Although we have not resorted to tyranny or subjected our enemies to attacks to impose our "superior" religion or nation upon them, our enemy neighbors—both past and present—have unfortunately not conducted themselves in this fashion.

Today, we consider to be sacred the war of life and death that we are fighting against the Turkish and Azerbaijani governments, as we did in 1895-1896 when we bore arms against Ottoman Turkey (during the Hamidian Massacres), in 1909 against the Ottoman Young Turks and in 1920-21 against the newly awakening Kemalist Turkey.

After the horrific genocide, our survivors had a brief opportunity to return to their homelands, particularly to Cilicia and its environs, and to Van and Kars, in hopes that they would at last receive a worthy remuneration for the sake of the millions of victims of the genocide and the heroic Armenians who fought beside the Allies of World War I against the German-Ottoman massacres. But that did not happen and we were once again forced to bear arms against the Turks. Contrary to the promises of peace of our allies, Armenians throughout Cilicia once again found themselves face-to-face against their age-old enemy.

Our heroes and heroines of Chork-Marzban in 1920-1921 not only succeed in defending our orange grove, but also waged a successful counter-attack that struck fear in our neighboring Turkish speaking tribes. The following individuals shone with heroism: Commander Jora Iskenderian from Musa Dagh and from among his faithful soldiers, his successor Evik Minas (Vartanian) and his fellow soldiers Bodrum "Bebek", Bodrum Minas, F. Hagop Mavian (the father of famous writer Vahram Mavian), Haig Peltekian, Daniel Yegenian, Iskender Asadourian, Boghos Abuhajian, Artin Khacherian, Sarkis Pektekian, "Pullu" Minas (Krikorian), "Chepel" Missak, "Deli" (Daredevil) Hagop, "Karabash" (black head), Garabed, Meghdese Minas, Majar Missak, Majarian Kevork, Misak Der Boghossian of Hajin, "Keur" (Blind) Issibi and his 11 volunteer fighters.

It is worth recording the episode of the unloading of the armaments sent by the Greek Prime Minister Venizelos that took place during the same period, and in which the heroes of Chork-Marzban participated. The latter, over the course of about three days, managed to smuggle and distribute the arms throughout our homeland, hidden from French oversight. In the handwritten memoirs that I have on hand, the following names are distinguished: Misak Iskenderian (Musa Dagh), Arabaje Manug, Aris, Evig Minas, Hampartsum Pashalian, Misak Majarian, Hagop Karayacoubian, H. Tangabakian, (also known as Deli Hagop), Hovhannes Keuroghlian, Chepel Missak, Bebek Keur (Blind).

Eternal glory to our heroes. We hope that the 3rd and 4th generations of Chork-Marzbantsis reading

**keghart.org** will search through their archives and confirm their relations to the names of the aforementioned heroes.

https://youtu.be/sBtRA2WWFCo

Դոկտ. Մինաս Գոճայեան

**ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆԻ 3-ՐԴ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ (1920-1921)**

Հայ ժողովուրդի պատմութիւնը յատկանշուած է բազում հերոսամարտերով։ Մեր թշնամիները մեզի պարտադրած են դիմել զէնքի ուժին։ Մենք մեր կրօնի եւ ազգային գերակայութեան հաստատման համար չենք դիմած բռնութեան եւ չենք սանձազերծած յարձակումներ։ Ցաւօք այդպէս չեն վարուած մեզի հետ մեր երէկուան եւ մա՜նաւանդ այսօրուան հարեւաններէն ոմանք։

Եթէ այս օրերուն մեր ժողովուրդը մահու եւ կենաց պատերազմ կը մղէ թուրքազերի պետութիւններու դէմ, ապա այս կռիւը մենք կը նկատենք սրբազան ինքնապաշտպանութիւն, որ յուսամ շուտով վերածուի սրբազան յարձակման, վասնզի **լաւագոյն պաշտպանութիւնը յարձակման մէջ է:** Այդպէս ալ եղաւ 1895-96-ին Օսմանեան Թուրքիայի դէմ (Համիտեան կոտորածներ), 1909-ին Երիտթուրք Օսմանեան կայսրութեան դէմ եւ ապա 1920-21 թթ. նոր զարթնող քեմալական Թուրքիոյ դէմ։

Ահաւոր ցեղասպանութենէն ետք մեր ժողովուրդի մնացորդացը առիթը ունեցաւ վերադառնալ յատկապէս Կիլիկիա եւ մերձակայ վայրերը, նաեւ Վան եւ Կարս՝ այն յոյսով որ Ա. Պատերազմին ընթացքին միլիոնաւոր զոհեր տուած եւ հերոսաբար դաշնակիցներու կողքին ընդդէմ Գերմանա-Օսմանեան ցեղասպաններու դէմ կռուած հայութիւնը ի վերջոյ պիտի ստանայ իր արժանի վարձատրութիւնը։ Բայց այդպէս չեղաւ եւ մենք կրկին անգամ ստիպուեցանք զէնք վերցնել թուրքին դէմ։ Հակառակ մեր «զինակիցներուն» խոստումներուն, Կիլիկիոյ տարածքին մէջ գտնուող հայութիւնը կրկին անգամ դէմ յանդիման գտնուեցաւ դարաւոր թշնամիին։

Չորք-Մարզպանի մեր հերոսներն ու հերոսուհիները 1920-1921 թթ. ոչ միայն կրցան պաշտպանել մեր նարնջաստանը, այլեւ հակայարձակման անցնելով սարսափի ենթարկեցին դրացի թրքալեզու ցեղերը։ Իրենց հերոսութիւններով փայլեցան Մուսալեռցի հրամանատար Զօրա Իսկէնտէրեանը, անոր հաւատարիմ զինուորներէն վերջինիս փոխարինած Էվիկ Մինասը (Վարդանեան) եւ իր զինակիցները՝ Պոտրում Պեպէքը, Պոտրում Մինաս, Տ. Յակոբ Քին. Մավեանը (Վահրամ Մավեանի հայրը), Հայկ Փելթեքեանը, Դանիէլ Եկէնեանը, Իսկէնտէր Ասատուրեանը, Պօղոս Ապուհաճեանը,Արթին Խաչերեանը, Սարգիս Փելթեքեանը, Փուլլու Մինասը (Գրիգորեան), Չեփել Միսաքը, Տէլի (Գիժ) Յակոբը, Գարապաշ Կարապետը, Մղտըսը Մինասը, Մաճառ Միսաքը, Մաճառ Գէորգը, Հաճընցի Միսաք Տէր Պօղոսեանը, Կոյր Իսիպի (Յովսէփ) որդի Արթինը, Սմբատ Պալեանը, Նազարէթ Մաճառեանը, Գրիգոր Գարավարդանեանը, Վահան Գոճայեանը (Գարասարգիսեան), Գէորգ Քէհեանը, Փօթուր

Օղլու Մեսրոպը, Կիւտիւկ (Կոլոտ) Խաչերն ու իր 11 հոգինոց խումբը:

Պէտք է արձանագրել այս դէպքերու ընթացքին Յունաստանի վարչապետ Վենիզելոսի ուղարկած զէնքերու ցամաքահանման դէպքը, որուն մասնակցեցան չորք-մարզպանցի այլ հերոսներ: Վերջիններս շուրջ երեք օրուայ ընթացքին յաջողեցան գաղտնաբար զէնքերը հասցնել մեր ծննդավայրը՝ խուսափելով ֆրանսական հսկողութենէն: Իմ ձեռքիս տակ գտնուող ձեռագիր յուշագրութիւններուն մէջէն առանձնացուցած եմ հետեւեալներուն անունները.- Միսաք Իսկէնտէրեան (Մուսալեռցի), Արապաճը (կառապան) Մանուկ, մի ոմն Արիս, դարձեալ Էւիկ Մինաս, Համբարձում Փաշալեան, Միսաք Մաճառեան, Յակոբ Գարաեագումեան, Յ. Թանկապագեան (Տելի-«Գիժ»-Յակոբ), Յովհաննէս Քէօրօղլեան, Չեփել Միսաք, Պէպէք (Քէօր):

Յաւերժ փառք մեր հերոսներուն: Կը յուսանք որ keghart.org կարդացող 3-րդ եւ 4-րդ սերունդի չորք-մարզպանցիները կը պրպըտեն իրենց մօտ գտնուող հին թուղթերը եւ հարցուփորձերով կը գտնեն իրենց ազգակցութիւնը վերեւ նշուած մեր հերոսներուն հետ:

# Comments

**Keghart Fan** – 2020-11-05 11:51:25
Thank you for this article.